ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1963 Общественные науки

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ

10.9.1883—28.10.1963

Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, 80 տարեկան հասակում Վիեննայում վախճանվեց սփյուռքահայ բանասիրության նահապետն ու հայագիտության սյուներից մեկը՝ Հ. Ն. Ակինյանը։

Հ. Ն. Ակինյանը ծնվել է 1883 թ. Արդուինում (Վրացական ՍՍՌ) և 1895 թ. անցնելով Վիեննայի Մխիթարյան վարժարանը, հմտացել փիլիսոփայության, աստվածաբանության, բանասիրության, հին ու նոր լեզուների և այլ գիտությունների մեջ։ Նա դեռ շատ փոքր հասակից իր վրա էր գրավել մեծանուն գիտնական Հ. Ա. Այտընյանի ուշադրությունը։ Ակինյանը բանասիրության մեջ թրծվում է ժամանակի հայ նշանավոր գիտնականների, և օտարազգի հայտնի հայագետների ուսումնասիրություններով։

Դեռևս 1903 թ. սկսվում է նրա աշխատակցությունը «Հանդէս ամսօրեայ» պարբերականին, իսկ 1909 թ. դառնում է նրա խմբագիրը և վարում այդ պաշտոնը շուրջ կես դար։

Ակինյանը զբաղվել է նաև մանկավարժությամբ։ Իր բազմաթիվ զեկուցումներով նա ծանոթացրել է հայ մշակույթի գանձերը սկսած Վիեննայից մինչև Բեյրութ, Բուդապեշտից մինչև Երուսաղեմ։ Անուրանալի դեր է կատարել Վիեննայի Մխիթարյան մատենադարանի և գրադարանի ճոխացման գործում։

Հ. Ն. Ակինյանը մեծ դիրքի արժանացավ իր կատարած պատմա-բանասիրական անխոնջ աշխատանքներով, դառնալով ժամանակակից Հայագիտության խոշոր մշակներից մեկը։ Նա անխոնջ աշխատանք կատարեց հայ ձեռագրագիտության բնագավառում։ Ակինյանը հնարավորություն ստացավ լինելու Սովետական Հայաստանում և 1924—1928 թթ. որոնումներ կատարելու աշխարհում ամենահարուստ ձեռագրական գանձարանում։ Օրական 12—16 ժամ աշխատելով, նա կարողացավ շուրջ 5000 հայերեն գրչագրեր աչքի անցկացնել և ուսումնասիրել՝ Էջմիածնում, Երևանում, Մոսկվայում և առանձին անձանց մոտ։ Հետագայում վերհիշելով Սովետական Հայաստանի կառավարության կողմից իրեն ընձեռված հնարավորությունների մասին, Ակինյանը գրել է. «Ուսումնական այս բարյացակամ և ազնվական վերաբերմունքը, զոր ես վայելեցի այնքան առատորեն Հայաստան անցուցած չորս տարիներուս մեջ, հավետ երախտապարտ պիտի թողուն զիս հանդեպ սորհրդային Հայաստանի կառավարությանը։ Նա ոչ միայն աննախանձաբար բացավ իմ առջև Ձեռագրատունները և բարձր գնահատեց գրական պրպտումներս, այլև նպաստամատույց և քաջալեր եղավ ինձ բարոյապես և նյութապես ամեն դժվարություններուս մեջ։» («Հ. Ամսօրյա», 1929, էջ 196)։

Ձեռագրերի ուսումնասիրություններն Ակինյանն այնուհետև շարունակեց Բեռլինում, Մյունխենում, Տյուբինգենում, Փարիզում, Լեհաստանում, Հռոմում և Լիվոռնոյում։ Սկսած 1939 թ. մինչև համաշխարհային պատերազմի ավարտը՝ նա պրպտում է Մերձավոր արևելքի հայերեն ձեռագրերը, ձեռագրաց ցուցակներն ու հնատիպ գրականությունը։ Լինում է Երուսաղեմում և Զմմառում, ուր ցուցակագրում է ձեռագրերը, ուսումնասիրում Հալեպի գրչագիրները, ապա անցնում Կիպրոս, Կահիրե, Բեյրութ, և ցուցակագրում նաև այդ վայրերի ձեռագրերը։ Ահա այսպես ստեղծվեցին Ակինյանի «Հաւաքումն յիշատակարանաց» մեծ ժողովածուն և ձեռագրաց ցուցակների շատ հարուստ հավաքածուն։ Այս բոլորը ներհուն բանասերի համար անսպառ մի գանձարան հանդիսացավ իր ստեղծագործական բեղմնավոր կյանքում։

Հ. Ակինյանը 60 տարի ծառայելով հայագիտությանը, իր համառ ու տքնաջան աշխատանքի շնորհիվ գրեց 500-ից ավելի գիտական աշխատություններ, որից 50-ը ծավալուն մենագրություններ են։

Նա հմտությամբ զբաղվել է հայագիտության համարյա բոլոր բնագավառներով և ժամանակաշրջաններով, հեղինակ է պատմական, բանասիրական, մատենագիտական, միջնադարյան հայ գրականության, հայրախոսական, վարքաբանական, ձեռագրագիտական, լեզվաբանական, արվեստի, հայ իրավունքի, թարգ-

մանական, հայ գաղութների պատմության և հայագիտության հետ առնչվող բազմատեսակ գործերի։ Նրա գրչին են պատկանում նաև ավելի քան հարյուր գրախոսություններ, որոնք ինքնին ուսումնասիրություններ են։ Նրա գիտական շատ գործերում լույս աշխարհ են գալիս բազմաթիվ հեղինակներ, անծանոթ մնացած բնագրեր, հայ արվեստի գոհարներ։

Նրա երկար պրպտումների արդյունք հանգիստացող բնագրային հայտնաբերություններից են. Հովհան Օձնեցու մի նոր գրվածքը, Հովհան Ոսկեբերանի Սաղմոսի մեկնության հայերեն մի նոր թարգմանությունը ասորերեն կրկնագիր մի ձեռագրում, Եփրեմի Գործք առաքելոցի մեկնության հայերեն թարգմանությունը և նույն հեղինակի կցուրդները, Թեոդոր, Դիոնիսիոս Աղեքսանդրացու, Մակար Բ. Երուսաղեմացու գործերը և այլն։ Լվովում նրա հայտնաբերած ու հրատարակած՝ Սիմիոն Լեհացու ուղեգրությունը հավաստի կարևոր տեղեկություններ է բովանդակում մի շարք հայ գաղութների պատմության համար։ Գիտական կարևոր նշանակություն ունեն Ակինյանի մատենագրական և միջնադարյան հայ բանաստեղծների գործերին նվիրված ուսումնասիրությունները։ Այս առումով առաջին հերթին աչքի են ընկնում նրա «Մատենագրական հետազոտություններ» խորագրով 5 ստվար հատորները, ուր ամփոփված են մինչ այժմ միայն անուններով հայտնի բազմաթիվ հայ մատենագիրների կենսագրությունների լուսաբանումն ու նրանց գործերի հրատարակումը՝ բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ։ Կարևոր գործերի թվին են պատկանում նաև նրա «Զաքարիա եպիսկ. Գնունեանց եւ իւր տաղերը», «Ներսէս Լամբրոնացի, կենսագրութիւնն ու գրական վաստակը», «Գրիգոր Աղթամարցի և իր տաղերը. բնագիր և քննութիւն», «Հինգ պանդուխտ տաղասացներ» և շատ ուրիշներ։

Ակինյանի պատմագիտական գործերից են «Տաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. պատմական ուսումնասիրութիւն», «Կիւրիոն կաթողիկոս վրաց. պատմութիւն հայ վրացական յարաբերութիւնների», «Բաղէշի դպրոցը (1500—1704). Նպաստ մը հայոց եկեղեցւոյ պատմութեան և մատենագրութեան», «Ականց կամ Ակների վանքը» և այլ բազմաթիվ գործեր։ Ակինյանի պատմաքննական մի քանի այլ աշխատություններ, որոնք նվիրված են պատմահայր Մովսես Խորենացու, Վարդանանց հերոսամարտի պատմիչ Եղիշեի և այլոց գործերին, տեղիք են տվել մասնագետների միջև երկար վիճաբանությունների, քանի որ Ակինյանը փորձել էր խախտել իրենց տեղից այդ նշանավոր պատմիչներին, առանց սակայն վճռական կովաններ ունենալու։

Ակինյանի գլուխ-գործոցն էր լինելու հայ մատենագրության պատմությունը՝ սկսած Ե. դարից մինչև 1800 թ. և, որի վրա նա աշխատում էր շուրջ կես դար։ Այդ գործը բաղկացած էր լինելու երեք հատորներից։ Նրա անտիպ գործերից են նաև Պատմություն հայ թարգմանության օտարալեզու բնագրերի (408—1800), Գր. Գալեմքյարյանի հետ կազմած հայերեն հնատիպ գրականության 300 տարիներին (1512—1812) նվիրված գործը, ինչպես նաև Ղրիմի հայ գաղթականության ժամանակագրությունը (1300—1700), Գավազանագիրք հայ կաթողիկոսների 220 թ. մինչև մեր օրերը պատմական և ժամանակագրական ուսումնասիրությունը և բազմաթիվ բնագրագիտական գործեր։

Հ. Ակինյանը հակառակ իր պատկառելի վաստակին գտնում էր, որ իր արած գործը լոկ սկիզբն է։ Չնայած իր տարիքին և հիվանդությանը, նա մեծ սիրով ու համակրությամբ էր հետևում ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի ու Մաշտոցի անվան մատենադարանի կողմից հրատարակված հայագիտական աշխատություններին։

Հ. Ն. Ակինյանի գիտական ժառանգության լավագույն մասը միշտ կհիշվի և կուսումնասիրվի, իր արժանի տեղը կգրավի հայ մշակույթի երախտավորների գործերի շարքում։

Ս. Քոլանջյան

ՎԼԱԴ ԲԸՆԸՑԵԱՆՈՒ

22.8.1900—8.11.1963

Բուխարեստում վախճանվեց ռումինացի մեծանուն գիտնական, արևելագետ և նշանավոր հայագետ պրոֆ. դոկտ. Վլադ Բընընցեանուն։ Նա ծնվել է Ռումինիայի Տիմիշոարա քաղաքում և ավարտել Չերնովեցի համալսարանը, ապա իր մասնագիտական ուսումը շարունակել է Ֆրանսիայում, Անգլիայում և Իտալիայում (1924—1932), հմտացել է բազմաթիվ հին ու